



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N ԱՐՊ/133-2019

ք.Արտաշատ

30 08 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի
ապրիլի 25-ի N506-Ն որոշման խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության
կառավարության 2005թ ապրիլի 28-ի <<Պետական գույքի էլեկտրոնային հաշվառման և
գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին >> N562- Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ֆինանսական և
սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի
պետ Նելլի Սիմոնյանին նշանակել համակարգից օգտվող պատասխանատու անձ
Արարատի մարզպետարանի հաշվեկշռում հաշվառված պետական գույքի էլեկտրոնային
հաշվառման և գրանցամատյանի վարման համար:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և
սպորտի վարչության կրթության բաժնի պետ Ալբերտ Մկրտչյանին նշանակել
համակարգից օգտվող պատասխանատու անձ Արարատի մարզպետարանի


ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների (դպրոցների և թանգարանների) պետական գույքի էլեկտրոնային հաշվառման և գրանցամատյանի վարման համար:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ Հայկ Բադալյանին նշանակել համակարգից օգտվող պատասխանատու անձ Արարատի մարզպետարանի ենթակայության պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների(առողջապահական) պետական գույքի էլեկտրոնային հաշվառման և գրանցամատյանի վարման համար:

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճանապարհաշինության և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ Կարեն Ստեփանյանին նշանակել համակարգից օգտվող պատասխանատու անձ Արարատի մարզպետարանի ենթակայության միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների, արհեստական կառույցների, ճանապարհային կահավորանքների ու ճանապարհային մաս հանդիսացող այլ շինությունների էլեկտրոնային հաշվառման և գրանցամատյանի վարման համար:

5. Համակարգից օգտվող պատասխանատու նշանակված անձանց բացակայության դեպքում էլեկտրոնային հաշվառման և գրանցամատյանի վարման պատասխանատվությունը դնել ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար Նաիրա Հայրապետյանի վրա:

 Восстановимая подпись

X 

VERIFIED OCSP 30/08/19 09:43:10 GMT+4

ԱՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN GARIK 2811870695

Գ.ՍԱՐԳՍՅԱՆ